GRAND MASTER

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

01

Մեր մասին

Մեր պատմությունը
Ղեկավարության ուղերձ
Առաքելություն. Տեսլական
Մեր արժեքները
Շահառու կողմերը

02

Կայունության չափանիշներ

Բնապահպանական հանձնառություն
Թափոնների կառավարում
Կայունության նպատակներ
Tapon.am
Կայուն գնումներ

03

Անվտանգության մշակույթ

Աշխատանքային պայմաններ
Մարդու իրավունքներ
Էթիկա

04

Համայնքի ներգրավվածություն

Միջոցառումների իրականացում
Կորպորատիվ նվիրատվություն



GRAND MASTER

01

ՄԵՐ ՄԱՍԻՆ



ՄԵՐ ՄԱՍԻՆ

“Գրանդ Մաստեր” ՍՊ ընկերությունն իր գործունեությունը ծավալում է 2006 թվականից:
Մինչ 2006 թ. ընկերության տարածքում գործում էր 1969 թ.-ին հիմնադրված “Մասիսի Գոֆրոտարա” արտադրական ձեռնարկությունը, որը զբաղվում էր բացառապես գոֆրոտարայի արտադրությամբ:
Հայտնի գործարար Հրանտ Վարդանյանի կողմից ձեռք բերվելուց հետո կազմակերպությունն ընդգրկվեց Հայաստանում ձեռարկությունների խոշորագույն խմբի՝ “Գրանդ Հոլդինգ”-ի կազմի մեջ: Պահպանելով գործունեության իր մասնագիտացված տեսակը՝ իրականացվեցին բազմաթիվ խոշոր ներդրումներ ընկերության վերակազմավորմանն ու արդիականացմանն ուղղված ծրագրերի շրջանակներում, ինչի արդյունքում, բացի գոֆրոարտադրությունից, ստեղծվեցին նոր արտադրամասեր և բաժիններ, այն է՝ օֆսեթ և խորը տպագրության արտադրամասեր, նախատպագրության և արտադրական դիզայնի բաժին, տեխնիկական միջոցների մատակարարման բաժին, գնումների և լոգիստիկայի բաժին, արտադրության և պլանավորման բաժին, լաբորատորիա, որն արդիականացվեց որակի վերահսկողության նպատակով՝ համալրելով նաև աշխատակազմը: Ներդրումային ծրագրերը շարունակվում են առ այսօր: Հերթական խոշոր ծրագրի ավարտը նախատեսվում է 2022 թ.:
Արդյունքում գործարկվելու է վերամշակված թղթի թափոններից և առաջնային հումքից թղթի, ստվարաթղթի, ինչպես նաև սանիհիգիենիկ թղթի արտադրություն:
Ներկայումս ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում ոլորտի առաջատարն է արտադրական ծավալների, սարքավորումների, որակի, աշխատակիցների քանակի, ինչպես նաև վճարված հարկերի մասով:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁ

Հարգելի Ընթերցող,
Ուրախ ենք տեղեկացնել, որ Գրանդ Մաստեր ընկերությունը հանձն է առել ծավալել գործունեության նոր և պատասխանատու փուլ:
Ընկերությունում ներդրվել, պահպանվում և շարունակաբար զարգացվում են որակի, բնապահպանական և կայուն զարգացման կառավարման համակարգերը համաձայն միջազգային ստանդարտների պահանջների և միջազգային լավագույն փորձի:
Մենք կորպորատիվ քաղաքացիներ ենք. Մենք հարգում ենք շրջակա միջավայրը, Մենք հոգ ենք տանում մեր համայնքի և շահառու կողմերի մասին և Մենք պարտավորվել ենք ապահովել հավասար հնարավորություններ, այդ իսկ պատճառով սահմանել ենք կայունության նպատակներ, որոնց հասնելու համար ձեռնարկում ենք համապատասխան միջոցառումներ:
Մեր հարստությունը՝ մեր մարդիկ են:
Գրանդ Մաստերի կայուն, երկարաժամկետ աճի կարևոր հենասյունն այն է, որ կազմակերպության կառավարումն ու գործառնությունները լիովին համահունչ լինեն բնապահպանական և սոցիալական պատասխանատու գործելակերպին, որը համարում ենք մեր մարդկանց հաջողությունն ու զարգացումը և մեր բնապահպանական ազդեցության բարելավումը:
Ընկերության կորպորատիվ մշակույթը սահմանում է, թե ով ենք Մենք, ինչպես ենք Մենք գործում և որն է մեր պարտականությունը բիզնես վարելու հարցում: Մենք կարևորում և հարգում ենք մեր աշխատակիցների, գործընկերների, համայնքի ներկայացուցիչների և այլ շահառու կողմերի իրավունքները՝ հանձն առնելով անվերապահորեն հետևել ընկերության կողմից որդեգրած քաղաքականություններին և օրենսդրական պահանջներին՝ ստեղծելով կայուն արժեք նրանց համար:
Ճանաչելով բնապահպանական գլոբալ ռիսկերը՝ Մենք պատասխանատվություն ենք կրում վերահսկելու շրջակա միջավայրի վրա մեր ունեցած ազդեցությունը: Շարունակում ենք ուղիներ գտնել՝ նվազեցնելու էկոլոգիական ազդեցությունը մեր գործունեության ընթացքում՝ համապարփակ բնապահպանական կառավարման համակարգի ներդրման միջոցով, որի վառ ապացույցն է Բնապահպանական կառավարման համակարգի ներդրումը ըստ ISO 14001:2015 միջազգային ստանդարտի պահանջների:
Լիահույս ենք, որ մեր փորձին կհետևեն նաև մեր գործընկերները և կայուն զարգացման ուղին կանցնենք միասին:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍԼԱԿԱՆ

Մեր Առաքելությունն է

ապահովել մեր հաճախորդների տպավորիչ ներկայացվածությունը շուկայում՝ տրամադրելով փաթեթավորման լուծումներ.

Մեր Տեսլականն է

ճանաչվել որպես փաթեթավորման լուծումներ տրամադրող կայուն և նորարարական խոշոր մատակարար.

ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐՆ ԵՆ՝

ՈՐԱԿ

Որակ ամեն ինչում՝ ներառյալ մեր գործընթացները: Մենք միշտ լրացուցիչ ջանք ենք գործադրում մեր հաճախորդներին գերազանց և բարձրակարգ ապրանքներ մատուցելու համար:

ԱՃ

Մենք նպատակ ունենք անընդհատ աճել որպես ընկերություն: Մենք հավատում ենք, որ շարունակական ուսումը, զարգացումը և ներդրումը մարդկանց մեջ մեզ առաջ են մղելու:

ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ

Մենք միտված ենք մեր բոլոր շահագրգիռ կողմերի հետ հավատարիմ հարաբերությունների ստեղծմանը և պահպանմանը:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻ

Մենք կորպորատիվ քաղաքացիներ ենք. մենք հարգում ենք շրջակա միջավայրը մենք հոգ ենք տանում մեր համայնքի մասին և մենք պարտավորվել ենք ապահովել հավասար հնարավորություններ:

ՄԵՆՔ ՇԱՐՈՒՆԱԿԱԲԱՐ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՇԱՀԱՌՈՒ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Աշխատակիցներ	Հաճախորդներ	Համայնք	Մատակարարներ	ՀՀ Կառավարություն
Մաքուր, անվտանգ ու առողջ աշխատանքային և շրջակա միջավայր.	Որակյալ, էկոլոգիապես մաքուր և իրենց պահանջներին համապատասխան ապրանքների տրամադրում.	Համայնքի էկոլոգիական բարեկեցություն, անաղմուկ աշխատանք, մաքուր և խնամված շրջակա միջավայր գործարանին առնչվող տարածքներում.	Պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարում.	Օրենսդրական և իրավական պահանջների պատշաճ և ժամանակին կատարում.

GRAND MASTER

02

ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ՄԵՆՔ ՀՈԳՈՒՄ ԵՆՔ՝

Գլոբալ միջավայրի համար

Ազգային զարգացման համար

Մեր համայնքի համար

Մեր հաճախորդների համար

Մեր շահառուների համար

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Մենք հոգում են շրջակա միջավայրի մասին և ձեռնարկում ենք համապատասխան քայլեր և հնարավոր միջոցառումներ բնապահպանական կայունության բարձր ցուցանիշներին հասնելու և բացասական ազդեցությունը նվազեցնելու համար:

Մեր բնապահպանական նպատակներն են հանդիսանում

ISO 14001 Բնապահպանական կառավարման համակարգի սերտիֆիկացում

EcoVadis Կայունության համակարգի չափանիշների համապատասխան գնահատում

Բնական ռեսուրսների օգտագործվող քանակների նվազեցում

Վտանգավոր թափոնների գեներացման նվազեցում



Բոլոր շահառու կողմերի կայունության վերաբերյալ իրազեկվածության ապահովում



Ջերմոցային գազերի արտանետման նվազեցում

Մենք ստեղծել ենք համակարգ, մեխանիզմներ և վերահսկողության մեթոդներ վերոնշյալ նպատակներին հասնելու և արդյունավետությունն ապահովելու համար:

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Էկոլոգիական աղտոտվածությունը նվազեցնելու համար Ընկերությունը ներդրել է թափոնների հաշվարկման հստակ մեխանիզմ՝ կառավարելու ընկերության կողմից առաջացող թափոնները և գնահատելու վերամշակման և վերաօգտագործման հնարավորությունները:

Թափոնների տեսակավորում ընկերության տարածքում

Թափոնները տեսակավորվում են ըստ իրենց հետագա գործածության հնարավորության

Թափոնների քանակի կրճատում

Շնորհիվ հաշվարկների իրականացման մեզ հաջողվել է կրճատել որոշ թափոններ՝ գործընթացներն արդյունավետ կազմակերպելով

Թափոնների շարժի կառավարում

Մենք վերահսկում ենք թափոնների տեղաշարժը և հետագա գործածությունը՝ հաշվի առնելով նյութերի կենսաշրջանը

Արտակարգ իրավիճակների պատրաստվածություն

Ընկերության մեջ ներդրված է արտակարգ իրավիճակների արձագանքման համակարգ, որի, ըստ անհրաժեշտության կիրառումը, նվազեցնում է բնապահպանական հավանական ռիսկերը և ազդեցությունները

Ընկերության տարածքում 2021թ երկրորդ կիսամյակում առաջացած ընդհանուր թափոնների 80% հանձնվել են կամ վերամշակվել են մեր ընկերությունում:

TAPON.AM

Մենք հավատում ենք, որ բնապահպանական կայունության ապահովումը յուրաքանչյուրիս պատասխանատվությունն է, ուստի ձեռնարկել ենք tapon.am նախագիծը և ստեղծել ենք հարթակ՝ հավելված՝ ընկերությունների և ֆիզիկական անձանց ներգրավվածությունը ապահովելու համար: tapon.am հավելվածի օգնությամբ ցանկացած բաժանորդ կարող է վերամշակման հանձնել թղթի թափոնները և վաստակել TapPoint միավորներ:

Թափոնը վերամշակման հանձնելով՝ բաժանորդները հնարավորություն են ստանում քվեարկել հավելվածի կողմից հրապարակված հանրօգուտ ծրագրից մեկի օգտին, որոնց նպատակն է աջակցել միջավայրի պահպանության և մաքրության կարևորագույն խնդրի լուծմանը:



Վերամշակման համար թղթի մթերման ծավալները 2021թ.-ի հունվարից հոկտեմբեր ամիսներին կազմել են՝ 48.500 կգ

600+ փրկված ծառերի քանակ 2021թ ընթացքում

Հավելվածը թույլ է տալիս բաժանորդներին հետևել իրենց բնապահպանական ակտիվությանը և ստանալ էկո քաղաքացու, էկո վարպետի, էկո հանճարի և էկո հերոսի կարգավիճակներ:

ԿԱՅՈՒՆ ԳՆՈՒՄՆԵՐ

Հավատարիմ մնալով կայուն զարգացման մեր սկզբունքներին և արժեքներին, հաստատակամ ենք իրականացնել գնումների գործընթացը՝ հաշվի առնելով բնապահպանական, սոցիալական և տնտեսական ասպեկտները:

Մշտապես գնահատում ենք մեր մատակարարներին և, կայունության նպատակներին հասնելու համար, գնումների ժամանակ նախապատվությունը տալիս ենք նորարական արդյունավետ լուծումներին՝ մատակարարման ամբողջ շղթայում ավելի կայուն արդյունքներ ապահովելու համար:

Գնումներն իրականացվում են օրենսդրական պահանջների ինչպես նաև ընկերության կողմից սահմանված գնումների քաղաքականության համաձայն: Ապահովվում է արդար, անաչառ, հետևողական գնումների գործընթաց՝ բացառելու որևէ զեղծարարության փորձ:

Ընկերությունը ապահովում է մատակարարների, կապալառուների և գործընկերների իրազեկվածությունը բնապահպանական, սոցիալական, տեխնիկական անվտանգության մասին:

Ընկերության գործընթացներում օգտագործվող հումքի 70 և ավելի տոկոսը մատակարարող ընկերությունների զգալի մասը սերտիֆիկացված է բնապահպանական, սոցիալական և այլ միջազգային ստանդարտներով և համակարգերով ինչպիսիք են՝

FSC

ISO 14001

PEFC

ISO 50001

GOLD 2021 ecovadis Sustainability Rating

ISO 9001

GRAND MASTER

03

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Մենք հաստատակամ ենք ստեղծել այնպիսի աշխատանքային միջավայր, որտեղ աշխատողներն իրենց ապահով ու պաշտպանված կզգան:
Մենք հավատում են, որ անվտանգ և արժանապատիվ աշխատանքային միջավայրը աշխատողների ֆիզիկական և հոգեկան առողջության երաշխավորն է:
Հավատարիմ մնալով այս համոզմանը՝ շարունակաբար բարելավում ենք մեր աշխատանքային միջավայրը, գործելակերպը և քաղաքականությունը՝ խթանելու աշխատակիցների բարեկեցությունը:

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ընկերությունը չափում, վերահսկում և ապահովում է աղմուկի, լուսավորության, ջերմաստիճանի, խոնավության և այլ գործոնների սահմանված նորմատիվները:

ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ընկերությունում սահմանված են ընթացակարգեր, ըստ որոնց բոլոր կապալառուները իրազեկվում և հրահանգավորվում են Գրանդ Մաստերում առկա հավանական վտանգավոր գործոնների և դրանց կանխարգելման միջոցառումների մասին:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ընկերությունը աշխատողներին ապահովվում է համապատասխան անհատական պաշտպանիչ միջոցներով՝ ականջակալներ, դիմակներ, ձեռնոցներ, հատուկ աշխատանքային հագուստ տարբեր եղանակային պայմանների համար:
Ընկերության տարածքում տեղադրված են բոլոր իրազեկման և նախազգուշական նշանները, իրականացված են գծանշումներ և սահմանված են տարհանման ուղիներ անվտանգ տեղափոխություն ապահովելու համար:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ

Ամեն տարի ընկերության տարածքում իրականացվում են ուսումնավարժանքներ Ընկերության արտակարգ իրավիճակների կառավարման պլանի համաձայն՝ առաջնահերթություն տալով առավել հավանական և ռիսկային իրավիճակներին:
Գնահատվում է Ընկերության պատրաստվածության և արձագանքման աստիճանը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

90 % վերապատրաստված աշխատակիցներ

0 տեխնիկական անվտանգության և առողջության պատահար (2021)

Պարտադիր բժշկական ստուգումներ



Քանի դեռ մենք շարունակում ենք դիմակայել COVID-19 համաճարակի հետևանքով առաջացած մարտահրավերներին, մենք կշարունակենք կենտրոնացած մնալ մեր աշխատողների առողջության և անվտանգության պաշտպանության վրա՝ ապահովելով հակահամաճարակային կանոնները և պետական պահանջները, քանի որ մեր համայնքը և մեր արժեքներն են, որ պահպանում են մեզ:

ՄԱՐԴՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Աշխատողները մեծ արժեք ունեն Ընկերության համար և հաջողության բանալին են, ուստի մենք հաստատակամ ենք ձևավորել այնպիսի մշակույթ և աշխատավայր, որտեղ նրանք կարող են իրացնել իրենց ներուժը անվտանգ, վստահելի և ոգեշնչող միջավայրում:

Ընկերությունը պարտավորվում է խթանել անհատական մոտեցումը և բազմազանությունը և աշխատողներին զերծ պահել որևէ տեսակի խտրականությունից կամ ոտնձգությունից:

Ներգրավվածություն

Ընկերությունը խրախուսում և ապահովում է հավասար հնարավորություններ բոլոր աշխատողների համար: Անկախ սեռից, սոցիալական, ռասայական և այլ պատկանելությունից, բոլոր աշխատողները ունեն հավասար իրավունքներ և գնահատվում են միայն ըստ իրենց մասնագիտական հատկանիշների:

Կարիերայի պլանավորում

Գրանդ Մաստերում Յուրաքանչյուր աշխատող գիտի՝ որն է իր մասնագիտական աճի ուղին: Ընկերությունը սահմանել և արդեն տարիներ շարունակ հաջողությամբ իրականացնում է կարիերայի պլանավորման ծրագիրը:

Սոցիալական երկխոսություն

Ընկերությունը ստեղծել է Սոցիալական երկխոսության հարթակ, որը հնարավորություն է տալիս բացահայտել, վերլուծել և գնահատել աշխատակիցներին հուզող հարցերը և գտնել լուծումներ նրանց պահանջները բավարարելու համար:

Կառավարման համակարգերի կատարողականի գնահատում

Յուրաքանչյուր տարի Ընկերությունը սահմանում է կատարողականի նոր ցուցանիշներ՝ կառավարման համակարգերի և ստորաբաժանումների արդյունավետությունը գնահատելու, Շարունակական բարելավումն ապահովելու և կայունության նպատակներին հասնելու համար:

Խտրականության բացառում

Ընկերության էթիկայի, մարդու և աշխատանքային իրավունքների քաղաքականությունները բացառում են Ընկերության գործունեության որևէ փուլում խտրականության դրսևորումը:

ԷԹԻԿԱ

Ընկերությունը պարտավորվում է ծավալել իր գործունեությունն առավելագույնս թափանցիկ:

Ընկերության էթիկայի քաղաքականությունը սահմանում է Ընկերության էթիկայի կանոնները՝ պայմաններ ստեղծելով կոռուպցիայի աղբյուրների բացահայտման և կանխարգելման համար:



Վարվելաձևի նորմեր

Ընկերության էթիկայի քաղաքականությունը և կարգապահական կանոնները սահմանում են հստակ մեխանիզմներ և միջոցառումներ կանխարգելելու էթիկական պատահարների ի հայտ գալը:

Կոռուպցիայի բացառում

Ընկերությունը պարբերաբար վերլուծում և գնահատում է հավանական կոռուպցիոն ռիսկերը և ըստ անհրաժեշտության ձեռնարկում ուղղիչ և կանխարգելիչ միջոցառումներ:

Տեղեկատվական անվտանգության ապահովում

Ընկերությունը Տեղեկատվական անվտանգության ապահովման հիմք է ընդունում միջազգային «Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգ»-ի (GDPR) սկզբունքները: Ապահովված են գործունեության շրջանակներում կիրառվող տեղեկատվական ակտիվների հասանելիությունը, ամբողջականությունը և գաղտնիությունը:

GRAND MASTER

04

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Մենք կարևորում ենք համայնքի և մեր պետության համաչափ զարգացումը սոցիալական, տնտեսական և բնապահպանական առումներով:
Այդ իսկ պատճառով ներգրավվում ենք համայնքը մեր աշխատանքների և մեր աշխատանքները համայնքի գործունեությանը:



Մեր աշխատակիցների 60 %-ը Մասիս խոշորացված համայնքից են և իրենց անմիջական ներդրումը ունեն թե ընկերության գործունեության ծավալման և թե համայնքի խնդիրների մասին Ընկերության շրջանակներում բարձրաձայնելու մեջ:

700+
աշխատողներ

54% -

46% -

Ընկերությունը մշտապես իրականացնում է ծրագրեր համայքնի հետ կապը հաստատուն և շարունակական պահելու համար: Օրինակ են հանդիսանում շաբաթօրյակները, ուսուցողական և ժամանցային միջոցառումները, դպրոցահասակ երեխաների բնապահպանական և սոցիալապես պատասխանատու գործունեության իրազեկումը և այլն:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր ընկերությունը հանդիսանում է Գրանդ Հոլդինգ ընկերությունների խմբի անդամ և իր անմիջական մասնակցությունն է ցուցաբերում Հոլդինգի կողմից Հայաստանում իրականացվող բարեգործական ծրագրերին, որոնցից են՝

Մասիս քաղաքի այգին ամբողջովին նոր շունչ է ստացել շնորհիվ վերակառուցման: Այգին կանաչապատվել է, ամբողջովին փոխվել է սալահատակը, տեղադրվել են նստարաններ, զրուցարաններ, հայկական ավանդական զարդանախշերով ցայտաղբյուրներ, մանկական խաղահրապարակ, անցկացվել է լուսավորություն: Քաղաքի այգում տնկվել են տարատեսակ ծառեր և կառուցվել է բեմ իր նստատեղերով՝ համայնքի ներգրավվածությունը ավելի ակտիվ պահելու համար:

Հիմնովին քանդվել և կառուցվել է ընկերությանը հարակից 3,2 կմ երկարությամբ փողոցը:
Փոխարինվել են փողոցի տակով անցնող բոլոր ջրագծերը:
Կառուցվել է ջրահեռացման նոր ցանց:
Ճանապարհին տնկվել է եվրոպայից ներմուծված և Հայաստանի բնակլիմայական պայմաններին համապատասխան, վարդագույն Robinia տեսակի 292 ծառ, որոնց հետագա խնամքը կիրականացվի ավտոմատ ոռոգման համակարգով:

Կորպորատիվ նվիրատվության մեր մյուս նախագծերին կարող եք ծանոթանալ մեր կայքէջում՝ www.grandmaster.am/csr1.html

GRAND MASTER

ԿԱՊ ՄԵԶ ՀԵՏ

Մեր ընկերության մասին հավելյալ տեղեկություն ստանալու համար կարող եք կապ հաստատել մեզ հետ հետևյալ հղումներով՝

+ 374 (236) 400-42

info@grandmaster.am

www.grandmaster.am / www.tapon.am

ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս 0802,
Հրանտ Վարդանյան 8